Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
օգոստոսի 25 -ի N 485 - Ա
որոշման

«ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿԻՆ ԱՐՁԱԳԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Նպաստել կորոնավիրուսային համավարակին արձագանքելու ջանքերին՝ օժանդակելով հիմնական սոցիալական ծառայությունների հասանելիության պահպանմանը բռնկման հետևանքով տուժած համայնքներում և աջակցելով կարիքավոր երեխաներին հեռավար ուսուցման հարցում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիա
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Երևան և ՀՀ մարզեր, Բնագավառը՝ հումանիտար օգնության, առողջապահական և սոցիալական օժանդակության տրամադրում
6.	Ծրագրի բյուջեն	260,593,224 դրամ (526,451 Շվեյցարական ֆրանկ)

7.	Բարեգործություն ստացողը	6700 միայնակ կենսաթոշակառուներ և հաշմանդամություն ունեցող կարիքավոր բնակչություն, 500 դպրոցական երեխաներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2020 թվականի օգոստոսի 15-ից մինչև դեկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ ուղղություններով՝ 1. Հումանիտար աջակցության տրամադրում սոցիալապես անապահով միայնակ տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց՝ առաջին անհրաժեշտության սննդի և հիգիենիկ պարագաների տրամադրման միջոցով՝ ներառյալ դժվար հասանելի և սահմանամերձ համայքներում ծառայությունների տրամադրում՝ ձեռքբերվող միկրոավտոբուսի միջոցով (բյուջե՝ 92,867,000 դրամ, ժամանակահատված՝ 15.08.2020-31.12.2020թ.) 2. Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին հեռավար կրթության կազմակերպման նպատակով (բյուջե 29,750,000 դրամ, ժամանակահատված՝ 15.08.2020-31.12.2020թ) 3. Տնտեսական և սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում սոցիալապես անապահով միայնակ տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց՝ բնակարանային վարձի փոխհատուցման և սոցիալ-հոգեբանական կենտրոնի կողմից տրամադրվող ծառայությունների միջոցով (բյուջե՝105,811,724 դրամ, ժամանակահատված՝ 15.08.2020-31.12.2020թ./ 4. Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 38,565,500 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, և գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքների, կոմունալ և գրասենյակային սպասարկման ծառայությունների, ՀԿԽԸ անձնակազմի և կամավորների համար պաշտպանիչ միջոցների ձեռք բերում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝ 1. Սննդամթերքի և հիգիենիկ պարագաների ձեռքբերում՝ 62,826,000 դրամ արժողությամբ

		2. Բեռնատար մեքենաների վարձակալության և բեռնափոխադրման ծառայությունների ձեռքբերում ՝ 1,000,000 դրամ արժողությամբ 3. Բենզինի ձեռքբերում ՀԿԽԸ մեքենաների համար՝ 2,800,000 դրամ արժողությամբ: 4. ՀԿԽԸ մեքենաների սպասարկման ծառայությունների ձեռքբերում՝ 240,000 դրամ արժողությամբ: 5. Միկրոավտոբուսի ձեռքբերում՝ 12,000,000 դրամ արժողությամբ: 6. Շահառուների համար դիմակների, ձեռնոցների, սանիտարական միջոցների (ալկոգել, հականեխիչներ) ձեռքբերում՝ 7,600,000 դրամ արժողությամբ: 7. 500 կարիքավոր ընտանիքների երեխաներին հեռավար կրթության կազմակերպման նպատակով պլանշետային համակարգիչների ձեռքբերում՝ 29,750,000 դրամ արժեղությամբ: 8. Անձնակազմի և կամավորների համար դասընթացների և վերապատրաստումների մեթոդական նյութերի պատրաստման ծառայությունների, և դասընթացների իրականացման համար հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում՝ 811,724 դրամ արժողությամբ: 9. Գրենական պիտույքների, կոմունալ և գրասենյակային սպասարկման ծառայությունների, ՀԿԽԸ անձնակազմի և կամավորների համար պաշտպանիչ միջոցների ձեռք բերում՝ 7,241 000դրամ արժողությամբ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 38,565,500 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ՝ 31,324,500 դրամ արժողությամբ և գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքների, կոմունալ և գրասենյակային սպասարկման ծառայությունների, ՀԿԽԸ անձնակազմի և կամավորների համար պաշտպանիչ միջոցների ձեռք բերում՝ 7,241,000դրամ արժողությամբ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը իրականացվելու է ՀՀ մարզերում և Երևան քաղաքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների, մարզպետարանների թիրախային համայնքների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել հաշվետվություններ Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիային, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործունեության անմիջական վերահսկում, իրականացվելու է արտաքին աուդիտ: Նաև ՀՀ Կառավարության 2003թ. հունվարի 16 N66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվի տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ